ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**27.09.2021թ**

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻ

**27սեպտեմբերի 2021թ.**

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով,հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 11.06.2018թ. № 729-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին)կանոնադրության 10-րդ կետի 14-րդ և 18-րդ կետի 7-րդ ենթակետերը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ դպրոց) ստուգումների իրականացման գործիքակազմի բարելավման, ինչպես նաև տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տրամադրված տեղեկատվության որակի և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ հաստատությունների բավարարվածության աստիճանը պարզելու նպատակով՝ տեսչական մարմնի կողմից իրականացվել է գործիքակազմի՝ ստուգաթերթերի արդյունավետության և իրականացված խորհրդատվությունների օգտակարության վերաբերյալ արձագանքների գնահատում: Գնահատման համար թիրախխումբ է ընտրվել 2020թվականին տեսչական մարմնի կողմից ստուգված 32 դպրոցները: Գնահատումն իրականացվել է համաձայն □ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերի և խորհրդատվության

արդյունավետության գնահատման □ հարցաթերթի (այսուհետ՝ հարցաթերթ): Հարցաթերթը ներառում է մեկ պատասխան ենթադրող, բազմակի ընտրությամբ և բաց պատասխաններով 11 հարց, որոնք բաժանվել են երկու մասի.

**1) ստուգաթերթերի արդյունավետության գնահատմանը վերաբերող հարցեր,**

**2) տեսչական մարմնի աշխատանքների և իրականացվող խորհրդատվությունների արդյունավետության գնահատմանը վերաբերող հարցեր:**

Հարցաթերթը լրացվել է ՀՀ տարբեր մարզերի (Արմավիր, Շիրակ, Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք, Արագածոտն, Լոռի) և Երևան քաղաքի 32 դպրոցների տնօրենների կողմից:

Արդյունավետության գնահատման հարցումն իրականացվել է հետևյալ ստուգաթերթերի վերաբերյալ՝

1. **ստուգաթերթ N 01** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ».

2. **ստուգաթերթ N 03** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ».

3. **ստուգաթերթ N 04** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումներ».

4. **ստուգաթերթ N 06** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում կառավարման խորհրդի

լիազորությունների կատարմանն ուղղված ստուգումներ».

5. **ստուգաթերթ N 07** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում խորհրդակցական մարմիններին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ».

6. **ստուգաթերթ N 08** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ».

7. **ստուգաթերթ N 11** «Հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ուսումնական հաստատություն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ»:

Ստորև ներկայացված են հարցման արդյունքներն՝ ըստվերոնշյալ երկու մասերի:

1. **<u>Ստուգաթերթերի արդյունավետության գնահատմանը վերաբերող հարցեր</u>**

➢ Դպրոցների տնօրենները ստուգաթերթերի արդյունավետությունը գնահատել են հետևյալ սանդղակով՝ *1՝ դժվարանում եմ պատասխանել, 2՝ արդյունավետ չեն, 3՝ մասամբ են արդյունավետ և 4՝ լիովին արդյունավետեն:* Գնահատման արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում, ընդ որում N 03 ստուգաթերթի արդյունավետությունը գնահատել է 31 տնօրեն, հետևաբար գծապատկեր 1-ում տվյալ ստուգաթերթի գնահատման արդյունքը տոկոսային համամասնությամբ ներկայացված է 31-ի նկատմամբ:

**Գծապատկեր 1**




Ինչպես երևում է գծապատկերից, չնայած հարցմանը մասնակից տնօրենների զգալի մասը կիրառված ստուգաթերթերի արդյունավետությունը գնահատել է ամենաբարձր՝ «4» միավորով («Լիովին արդյունավետեն»), այնուամենայնիվ առկա են նաև մասամբ ադյունավետության և անարդյունավետության ցուցանիշներ: Մասնավորապես՝ տնօրենների 56,2%-84,4%-ը լիովին արդյունավետ են համարում բոլոր 7 ստուգաթերթերի կիրառելիությունը ստուգումների իրականացման գործընթացում, 12.5%-37,5%-ը գտնում են, որ ստուգաթերթերը մասամբ են արդյունավետ, իսկ 3,1%-6,3%-ը

պատասխանել են, որ արդյունավետ չեն: Վերջինը վերաբերում է N06, N08 և N11 ստուգաթերթերին:

➢ **Նշել այն ստուգաթերթերը կամ ստուգաթերթերի կետերը, որոնց գործածումը չի նպաստում ուսումնական հաստատությունների գործունեության բարելավմանը** հարցն ունի բազմակի ընտրության հնարավորություն: Հարցմանը մասնակից տնօրենների 75%-ը (24 տնօրեն) պատասխանել են, որ բոլոր ստուգաթերթերով գնահատման արդյունքները նպաստում են ուսումնական հաստատությունների գործունեության բարելավմանը, 2 տնօրեն (6,25 %) չեն պատասխանել հարցին, իսկ մյուս 18,75%-ի (6 տնօրեն) պատասխանները՝ դպրոցների գործունեության բարելավմանը չնպաստող ստուգաթերթերի վերաբերյալ, ունեն հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 2).

**Գծապատկեր 2**




Չնայած տնօրենների մեծ մասը հավաստել է, որ բոլոր ստուգաթերթերով գնահատման արդյունքները նպաստում են դպրոցների գործունեության բարելավմանը, սակայն, ինչպես երևում է

գծապատկերից, առկա են նաև այլ պատասխաններ, երբ դրանք, ըստ տնօրենների, չեն նպաստում դպրոցի գործունեության բարելավմանը: Որպես այդպիսին՝ 5 տնօրեն նշել է ստուգաթերթ N 06-ը (Հանրակրթական ուսումնական հաստատությունում կառավարման խորհրդի լիազորությունների կատարմանն ուղղված ստուգումներ), 3-ը՝ ստուգաթերթ N 07-ը (Հանրակրթական ուսումնական հաստատությունում խորհրդակցական մարմիններին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ): Այս ստուգաթերթերի՝ N 01 (Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ), N 04 (Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումներ), N 08 (Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ), N 11 (Հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ուսումնական հաստատությունն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ) կիրառման վերաբերյալ, որ չեն նպաստում հաստատության գործունեության բարելավմանը, առկա են 1-ական պատասխաններ:

➢ **«Հստակ օրինակներով, ներկայացնել առաջարկներ ստուգաթերթերում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ»** բաց պատասխանով հարցին պատասխանել է տնօրենների 31,25%-ը (10 տնօրեն), ընդ որում պատասխանների մի մասը ներկայացնում են առաջարկ, որում առկա խնդրի լուծումը տեսչական մարմնի լիազորություններից դուրս է՝ □Օտարերկրյա սովորողների՝ հանրակրթական դպրոց ընդունելու

համար անհրաժեշտ փաստաթղթերը «Փոխճանաչման կենտրոն»-ում հստակեցնելու ժամկետները կրճատել, քանի որ երկարաձգման հետևանքով ստիպված ենք լինում սովորողին մեկդասարանցածը ընդունել □:

Մյուս պատասխանները ներկայացնում են խնդիրներ, որոնք որոշակիորեն խոչընդոտում են տնօրենների դպրոցների գործունեության կազմակերպումն իրականացնելիս: Դրանք մասնավորապես վերաբերում են՝

- ✓ դպրոցի կառավարման խորհրդի գործունեությանը, որը հաշվի է առնվում դպրոցի ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը գնահատելիս (ստուգաթերթ N06).
- ✓ սովորողների սահմանային թվի և լիցենզիայի պահանջների համապատասխանությանը, դպրոցների հերթայնությանը (ստուգաթերթ N01).
- ✓ երեխաների կյանքի և առողջության պահպանման հարցերին (ստուգաթերթ N03).
- ✓ մանկավարժական նիստերի անցկացմանը (ստուգաթերթ N04).
- ✓ սովորողի ուսումնական հաստատությունն ընդգրկման, հաստատությունից տեղափոխման և ազատման հարցերին (ստուգաթերթ N11).
- ✓ N04ստուգաթերթում 24-րդ և 41-րդ կետերի պահանջների բովանդակությանը:

Նշված հարցերին ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի տեսչական մարմնի կողմից տրամադրվող խորհրդատվությունների ընթացքում:

➢ **«Ստուգաթերթերում ընդգրկված գործառույթներն օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու համար ինչպիսի՞ աջակցության կարիք ունեք»** բազմակի ընտրությամբ հարցին տնօրենների 84,4%-ը նշել է, որ կարիք ունի

ուղեցույցների, տեղեկանքների և ձեռնարկների, 62,5%-ը նշել է՝ առկա խորհրդատվություններ և դասընթացներ, իսկ 56,3%-ը՝ առցանց խորհրդատվություններ կամ դասընթացներ տարբերակները (տե՛ս գծապատկեր 3).

**Գծապատկեր 3**




➢ **«Հաստատությունների գործունեությունն ըստ ստուգաթերթերի բովանդակության իրականացնելիս հատկապես ո՞ր ուղղությամբ կարիք ունեք խորհրդատվությունների»** հարցին տնօրենները մասնավորապես նշել են՝

1. հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության բոլոր օղակների վերաբերյալ նոր կարգերի կամ փոփոխությունների հարցերով խորհրդատվություններ կամ դասընթացներ.

2. հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների վերաբերյալ (ստուգաթերթ N04).

3. հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ուսումնական հաստատություն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման,

ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների վերաբերյալ (ստուգաթերթ N11).

4. հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի վերաբերյալ (ստուգաթերթ N08).

5.հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ուղղությամբ (ստուգաթերթ N01).

6. փոխտնօրենների հաշվետվությունների մշակված օրինակելի ձևանմուշների վերաբերյալ (ստուգաթերթ N04):

- Իլրումն նախորդ հարցին՝ դպրոցների տնօրեններն անդրադարձել են նաև ստուգաթերթերում ընդգրկված գործառույթներն իրականացնելիս առաջացած դժվարություններին, որոնք վերաբերում են ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխմանը, այլ երկրներից եկած սովորողի՝ առանձին առարկաների գծով փոխճանաչման գործընթացին և փաստաթղթային աշխատանքներին:

***2. <u>Տեսչական մարմնի աշխատանքների և իրականացվող խորհրդատվությունների արդյունավետության գնահատմանը վերաբերող հարցեր</u>***

- Տեսչական մարմնի աշխատանքների գնահատումն իրականացվել է՝ ըստ հետևյալ բնութագրիչների.
  - ✓ տեսչական մարմնի աշխատանքները անաչառ են և արդյունավետ,
  - ✓ տեսչական մարմնի կայքը հստակ արտացոլում է տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ամբողջականությունը,
  - ✓ տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության ընթացակարգերը պարզ են և թափանցիկ,
  - ✓ տեսչական մարմնի ծառայողները արհեստավարժ են:

Գնահատման համար կիրառվել է հետևյալ սանդղակը՝ «Լիովին համաձայն եմ», «Մասամբ եմ համաձայն», «Համաձայն չեմ»: Դպրոցների տնօրենների կողմից նշված բնութագրիչներով տեսչական մարմնի աշխատանքների գնահատումն ունի հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 4). **Գծապատկեր 4**



Գծապատկեր 4-ից երևում է, որ դպրոցների տնօրենները բարձր են գնահատել տեսչական մարմնի աշխատանքները, մասնավորապես՝ 87,5%-ը լիովին համաձայն է, որ տեսչական մարմնի աշխատողները արհեստավարժ են (նշված հարցին 1 տնօրեն չի պատասխանել), 96,9%-ը գտնում է, որ տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության ընթացակարգերը պարզ են և թափանցիկ, 93,8%-ի գնահատմամբ տեսչական մարմնի աշխատանքները լիովին անաչառ և արդյունավետեն:Ինչ վերաբերում է տեսչական մարմնի կայքում տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունն հստակ արտացոլմանը, դրանց հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողականության և ամբողջականության ապահովմանը, ապա միայն 84,4%-ն է լիովին համաձայն: Ընդհանուր առմամբ, նշված բնութագրիչների համար պատասխաններում առկա են նաև «Մասամբ եմ համաձայն», «Համաձայն չեմ» գնահատումները,որոնք չնայած փոքր թիվ են կազմում, սակայն ենթադրում են աշխատանքների վերանայում՝ ըստբնութագրիչների:

- Տեսչական մարմնի կողմից իրականացվող խորհրդատվություններին մասնակցելն

հարցմանը մասնակից տնօրենների 56,25%-ը (18 տնօրեն), հետևաբար խորհրդատվության արդյունավետության վերաբերյալ հարցերին պատասխանել են 18 տնօրեններ: Խորհրդատվության մասնակից տնօրենների տոկոսային բաշխվածությունը ներկայացված է գծապատկեր 5-ում.

**Գծապատկեր 5**




Տվյալ հարցին տրված պատասխաններից պարզ է դառնում, թե ինչով էր պայմանավորված տնօրենների կողմից առցանց և առկա խորհրդատվությունների, դասընթացների, ուղեցույցների, տեղեկանքների և ձեռնարկների մեծ պահանջարկը:

- Խորհրդատվություններին մասնակցած դպրոցների տնօրենները 1-5միավորային համակարգով (5-ն ամենաբարձրն է) գնահատել են տեսչական մարմնի կողմից իրականացվող խորհրդատվությունների արդյունավետությունը: Գնահատման արդյունքները ներկայացված է գծապատկեր 6-ում.

**Գծապատկեր 6**




Ինչպես երևում է գծապատկերից, տնօրենների 89%-ը խորհրդատվությունների արդյունավետությունը գնահատել է ամենաբարձր՝ 5 միավորով, 5,5-ական տոկոսը՝ 3 և 4 միավորով, ինչը հավաստում է խորհրդատվություններից տնօրենների բավարարվածության բարձր մակարդակի մասին:

- Միաժամանակ տեսչական մարմնի կողմից իրականացվող խորհրդատվությունների արդյունավետությունը գնահատվել է՝ ըստ հետևյալ բնութագրիչների.
  - ✓ խորհրդատվությունները արդյունավետ են, ծառայումենպատակին,
  - ✓ խորհրդատվությունները բովանդակալից են, տրամադրվում է օգտակար ու մատչելի տեղեկատվություն,
  - ✓ խորհրդատվությունները տալիս են բոլոր հարցերի սպառիչ պատասխանները:
  - ✓ խորհրդատվություն իրականացնողները տիրապետում են արդյունավետ հաղորդակցական հմտությունների,
  - ✓ խորհրդատվություններն օգնում են հաստատությունում ապահովել որակյալ

կրթություն, մատնանշում են այն ուղիները, որոնք կրթության կազմակերպումն ու կառավարումը դարձնում են ավելի արդյունավետ,

- ✓ խորհրդատվությունները հաճախակի ենլինում:

Գնահատման համար կիրառվել է հետևյալ սանդղակը՝ «Լիովին համաձայն եմ», «Մասամբ եմ համաձայն», «Համաձայն չեմ»: Դպրոցների տնօրենների կողմից նշված բնութագրիչներով խորհրդատվությունների գնահատումն ունի հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 7).

**Գծապատկեր 7**




Գծապատկեր 7-ում ներկայացված տվյալների համաձայն՝ տնօրենների 94%-ը գտնում է, որ խորհրդատվությունն իրականացնողները տիրապետում են արդյունավետ հաղորդակցման հմտություններին,

88%-ը գտնում է, որ խորհրդատվությունները արդյունավետ են և ծառայում են նպատակին, բովանդակալից են և տրամադրվում է օգտակար ու մատչելի տեղեկատվություն, 72%-ի գնահատմամբ խորհրդատվությունները տալիս են բոլոր հարցերի սպառիչ պատասխանները, օգնում են հաստատությունում ապահովել որակյալ կրթություն, մատնանշում են այն ուղիները, որոնք կրթության կազմակերպումն ու կառավարումը դարձնում են ավելի արդյունավետ: Միաժամանակ նույն բնութագրիչների համար առկա են «Մասամբ եմ համաձայն», «Համաձայն չեմ» գնահատումները,որոնք չնայած փոքր թիվ են կազմում, սակայն ենթադրում են աշխատանքների վերանայում՝ ըստ բնութագրիչների, մասնավորապես՝ խորհրդատվությունների հաճախակի իրականացման (տրված հարցին 2 տնօրեն չի պատասխանել, հետևաբար գծապատկեր 7-ում տոկոսային հաշվարկը կատարված է՝ ըստ հարցմանը մասնակիցների թվի), որակյալ կրթության ապահովման և կրթության արդյունավետ կազմակերպման ու կառավարման գործում դրանց օգտակարության և բոլոր հարցերին սպառիչ պատասխանների ապահովման ուղղություններով:

- Տնօրենների 44%-ը խորհրդատվությունների ձևաչափում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներկայացրել են առաջարկություններ, որոնց մեծ մասը վերաբերում է խորհրդատվությունները հաճախակի իրականացնելուն,մասնավորապես՝
  - ✓ պարբերաբար խորհրդատվությունների անցկացում մարզերում տնօրենների, փոխտնօրենների, խորհրդակցական մարմինների, կառավարման խորհրդի անդամների հետ,

- ✓ բաց առցանց հարթակի հասանելիություն, անհրաժեշտ պահին հարց ուղղելու և պատասխան ստանալու համար, ինչպես նաև հաճախ տրվող հարցերի և պատասխանների հասանելիություն և թափանցիկություն,
- ✓ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ առկա ձևաչափով, դպրոցների տնօրենների մասնակցությամբ 2-3 օր սեմինար-խորհրդատվությունների անցկացում, հանրակրթության օրենքների և կարգերի մեջ փոփոխությունների և ստուգաթերթերի մանրամասն բովանդակային քննարկումների վերաբերյալ:

Ելնելով վերլուծության արդյունքներից,կարելի է նշել, որ չնայած տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերի և տեսչական մարմնի ծառայողների տրամադրած խորհրդատվությունների արդյունավետության վերաբերյալ տնօրերնների մեծ մասի արձագանքները դրական են, այնուամենայնիվ առկա են նաև այլ արձագանքներ:

**Այսպիսով, առաջարկվում է՝ ստուգաթերթերը և խորհրդատվության ձևաչափերը վերանայելիս՝ հաշվի առնել նաև տնօրենների կարիքները և առաջարկները:**

*ՌԳՍՊՎԳ վարչություն*